ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մարտի 10-ից 14-ը

Հնդկաստանի Հանրապետության (ք. Նագպուր) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

1) Անդրանիկ Հակոբյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Տրանսֆերային գնագոյացման և հարկային համագործակցության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Հնդկաստանի Հանրապետություն, ք. Նագպուր, մարտի 10-ից 14-ը:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ, Հնդկաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Միջազգային փորձագետների կողմից գործնական քննարկում՝ ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի 1-ին Գործողության («Թվային տնտեսության մարտահրավերները») մաս կազմող «Գլոբալ նվազագույն հարկ» ստանդարտի (այսուհետ՝ Ստանդարտ) ներդրման վերաբերյալ: Հանդիպումների ընթացքում ներկայացվեցին նաև որոշ երկրների փորձը և մարտահրավերները՝ Ստանդարտի ներդրման ուղղությամբ:

5. Քննարկված թեմաները.

- ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի 1-ին Գործողության («Թվային տնտեսության մարտահրավերները») 2-րդ հենասյունը («Գլոբալ հարվող բազայի քայքայման մոդելային կանոններ»),
- Գործնական օրինակներ,
- Որոշ երկրների փորձը՝ տվյալ ստանդարտի ներդրման ուղղությամբ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվել են վերոնշյալ թեմաները և մի քանի մասնակից երկրների փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում քննարկվել է վերոնշյալ ՏՀԶԿ լուծումների ներդրման հետ կապված մարտահրավերները և փորձագետների պատրաստակությունը տրամադրելու մասնակից երկրներին աջակցություն՝ կարողությունների զարգացման նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է նման գործնական հանդիպումներ կազմակերպել հաճախակի

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անդրանիկ Հակոբյան՝

17/03/2025թ.